Ռուսաստանի Սոցիալիստ-Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետություն

Պրոլետարներ բոլոր երկրների, միացեք!

№ 2

ԿՈՒԻ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՀԱՄԱՐ

ՀԱՅ. ԱԶԳ. ԳՐԱԴԱՐԱՆ ՆՈՒՐԻ
ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ
ՄՍՏԳԵՄԱՐՈՒ

Գրակ
1220

ԳԻՆՆ Է 20 ԿՈՊ.

ԳԵՈՏԻԳՈՐՍԿ
Հրատարակ. Հիւս. Կովկ. Հայկական Կենտր. Կոմիս.
կից Ագիտացիոն-պրոպագանդ. Բաժանմունքի
1918

ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՀԱՄԱՐ ԿՌԻՎՂ ԶԻՆՈՐԻ ՀԱՆԴԻՍԱՒՈՐ ԽՈՍՏՄԱՆ ՓՈՐՄՈՒԼԱՆ

(Ընդունուած է Համառուս. Կենտր. Գործ. Կոմիտէի 1918 թ. ապրիլի 22-ի նիստում)

1) Ես, աշխատաւոր ժողովրդի զաւակ և քաղաքացի՝ Խորհուրդների Հանրապետութեան, ընդունում եմ Բանւորա - Գիւղացիական Իշխանութեան զինւորի կոչումը։

2) Ռուսաստանի և ամբողջ աշխարհի աշխատաւորութեան առաջ ես պարտաւորւում եմ պատւով կրել այդ կոչումը, բարեխղճաբար ուսումնասիրել ռազմական գործը և աչքի լոյսի պէս պահպանել ժողովրդական ու ռազմական գոյքը փչացումից և կողոպուտից։

3) Ես պարտաւոր եմ խիստ և անշեղ կերպով հետևել յեղափոխական դիսցիպլինային, անյապաղ կատարել Բան-

ւորա-Գիւղացիական Կառավարութեան շանակած հրամանատարների բոլոր հրամանները։

Ես պարտաւորւում եմ ձեռնպահ մնալ և հեռու պահել իմ ընկերներին Խորհուրդների Հանրապետութեան արժանաւորութիւնը վարկաբեկող և սորացնող արարքներից ու իմ ամբողջ միտքն ու գործունէութիւնը ուղղել դէպի բոլոր աշխատաւորների ազատագրման վեհ նպատակը։

4. Ես պարտաւորւում եմ Բանւորա-Գիւղացիական Կառավարութեան առաջին իսկ կոչով դուրս գալ պաշտպանելու Խորհուրդների Իշխանութիւնը ամեն տեսակ վտանգներից և նրա թշնամիների յարձակումներից ու կրելով յանուն Ռուսաստանի Խորհրդային Հանրապետութեան, յանուն եղբայրական գործի, յանուն Սոցիալիզմի և ժողովրդների եղբայրութեան չխնայել ոչ իմ ուժերը և ոչ իմ կեանքը։

6. Եթէ ես չարամտօրէն նահանջեմ այս իմ տուած հանդիսաւոր խոստու-

մից, ապա թող ես արժանանամ ընդ-
հանուր արհամարհանքի և թող պա-
ժուեմ յեղափոխական ժամանակի ամե-
նախիստ օրէնքով։

— —

Ընկեր բանուոր! Գիւղացի!

1) Միայն կապիտալի իշխանութեան
տապալումն ու սոցիալիստական յեղա-
փոխութեան յաղթանակը բոլոր երկր-
ներում, կտան քեզ իսկական ազատու-
թիւն, ճշմարիտ եղբայրասիրութիւն ու
հաւասարութիւն։

Ձախջախիր կապիտալիստների, հո-
ղատէրերի ու հարուստների իշխանու-
թիւնը, զարգացրու քո բոլոր ուժերով,
և եթէ հարկաւոր լինի, նոյնիսկ կեան-
քիդ գնով, Ռուսաստանում կատարուած
բանուորա-գիւղացիական յեղափոխու-
թիւնը, որով օգնած կլինիս համաշ-
խարհային յեղափոխութեան զարգաց-
մանը։

2) Ոչ մի միութիւն կապիտալիստի հետ—լինի դա օտարերկրեա թէ հայրենի, խոշոր թէ մանր և յամառ դիմադրութիւն՝ համաշխարհային իմպերիալիզմին, ամեն կերպ կռւիր այդ աւազակախմբերի դէմ։ Ոչ մի գերմանական զինւոր չպիտի ոռք դնի մեր սոցիալիստական հայրենիքը, ոչ մի թիզ հող չենք տա անգլօ-ֆրանսիական «քաղաքակրթւած» աւազակներին ու նրանց ոսկիներից կաշառւած չեխօ-սլովակներին, Բիչերախովին, Դենիկինին և բոլոր մանր աւազակներին, որոնք գործում են Հիւսիսային Կովկասում։ Ոչ մի գաւառ, ոչ մի նաւահանգիստ, ոչ մի գործարան չենք տա այդ թագակիր սրիկաներին։ Լաւ պաշտպանիր, բանւոր ու գիւղացի եղբայր, քո իսկական հայրենիքը այդ վաշխառուներից։ Համոզւած եղիր, որ նրանք կդարձնեն մեր երկիրը մի նոր Ուկրայնա, որտեղ բանւորութեան և գիւղացիութեան արիւնն է ծծւում, մի նոր Ֆինլանդիա, որտեղ բանւորութեան ու գիւղացիու-

թեան արիւնն է հոսում դեռի նման. կկապեն մեր վրին աւելի խայտառակ հաշառութիւն, քան Բրեստ-Լիտովսկիինն է։ Համոզուած եղիր, որ տասը, հարիւր անգամ աւելի պիտի վճարես ֆրանսիական փոխառութիւններին, քան գերմանական բուրժուազիային։

3) Ոչ մի հաւատ սոցիալ-կադէտներին, մենշևիկներին, էս-էրներին, դաշնակցականներին—այդ յեղափոխական ներքինիներին ու դաւաճաններին. նրանք քեզ կը հրաւիրեն միանալ ֆրանսիացիներին, կամ ընդունել անգլիական օրիէնտացիա և կռուել Խորհրդային Իշխանութեան դէմ, չհաւատաս նրանց, նրանք բուրժուազիայից կաշառուածներ են, նրա լակէյները և օր ու գիշեր պարապում են գտնելու միջոցներ, որպէսզի վիժեցնեն բանուորների ու աղքատ գիւղացիների սկսած յեղափոխութիւնը, նրանք բոլորն էլ աշխատում են վերականգնել հարուստների իշխանութիւնը։ Ոչ մի հաւատ

իմպերիալիստների սեղաններից փրշ-
բանքներ հաւաքողներին։

4) Զգուշացիր նրանցից, որոնք
քեզ բարեկամ ձևանալով, բուրժուազի-
այի, գեներալների և հոգևորականու-
թեան հետ միասին, ուզում են տապա-
լել բանւորա-գիւղացիական հանրա-
պետութիւնը և հաստատել բուրժուա-
կան հասարակապետութիւն։ Երբ այս
խմբակը յաղթանակեց, արագ ու հրա-
կայի քայլերով առաջ կը գան սև հա-
բիւրակային կազմակերպութիւնները և
բանւորների ու գիւղացիների արեան
գետերի ու նրանց դիակների վրա կը
կառուցեն ցարական գահը։

5) Դէպի կռիւ այն իմպերիալիստա-
կան կառավարութեան դէմ, որը այժմ
յարձակման է դիմել։

Դէպի կռիւ չեխո-սլովակների,տաճ-
կական ֆէոդալների և բոլոր նման
հակա յեղափոխական աւազակախմբերի
դէմ։

Մենք պիտի շատ շուտով մաքրենք
Հիւսիսային Կովկասը ու գնանք փրը-

կելու մեր տանջված ու չարչարված եղբայր բանտարկեալներին ու գիւղացիներին Անդրկովկասում։

Ընկեր բանտար և չքաւոր գիւղացի, եթէ առողջ ես վերցրու հրացանը ու մտիր Կարմիր Բանակի մէջ—ընդդէմ բոլոր հարուստների, ընդդէմ բոլոր աւազակների։

6) Առ հրացանդ և ոչ միայն անխնա կռիւ քո թշնամիների դէմ, այլ և գնդակահարիր նրան, ով կազմակերպում է քո շարքերը խայտառակ կերպով փախչելով ֆրոնտից, գնդակահարիր նրան, ով իր կեղտոտ ձեռքերով մօտենում է մեր սուրբ գործին, տեղնուտեղը ոչնչացրու Ծորհրդային Իշխանութեան անունը վարկաբեկողներին։

7) Առ հրացանդ, լաւ սովորիր գործածել այն, ճնշիր բոլոր հարուստների ու սպանների հակա-յեղափոխութիւնը թիկունքում, թիկունքը մաքրիր այդ պարազիտներից ու սնակալներից։ Անարգանքի սիւնին գամիր

Խորհրդների դէմ ագիտացիա մղող պրոպագանդիստներին, մահ նրան, ով կը համարձակուի ձեռք բարձրացնել քո իշխանութեան դէմ։

8) Բաւական է ընել բանուոր ու գիւղացի։ Համաշխարհային Յեղափոխութիւնն է, որ բարձրացրել են քո ընկերները Եւրոպայում, օգնիր նրանց կատարելու իրենց սուրբ ու արդար գործը։ Դեռ չի վերջացել կապիտալի, հարուստների իշխանութիւնը,—նա կը մեռնի, երբ կվերանա աշխարհից վերջին կապիտալիստը, հողատէրը, տէրտէրն ու սպան։ Բուրժուազիան արթուն է, նա պատրաստուում է, նա դաւեր է նիւթում քո դէմ, պատրաստ եղիր հարուածելու այդ ոդրուկներին։

Առ հրացանդ, մոլոր Կարմիր Բանակի մէջ, մօտ է յաղթանակի օրը, մօտ է այն օրը, երբ դու կը լինես ազատ, կապրես մարդու նման, կը լինես ինքդ քո տէրը ամբողջ երկրագնդում։

Ա՛ռ հրացանդ, մտիր Կարմիր Բանակի մէջ և մօտ է այն ժամը, երբ աշխարհիս վրա կը թագաւորի սէրը, հաւասարութիւնը և եղբայրութիւնը։

Ա՛ռ հրացանդ, մտիր Կարմիր Բանակի մէջ, կռուիր քո դասակարգային թշնամիների դէմ, այդ կռուում դու ոչինչ չես կորցնի, բացի քո շղթաներից, որի փոխարէն ձեռք կձգես ամբողջ աշխարհը։

Ա՛ռ հրացանդ—դէպի կռիւ։

Գրաբ
1920.

Типография «Союз. Раб. Печат. Дела».

[·054·]

4 տաս
12770

ԳԱՍ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0629349